

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ՈՒ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԸ
ԱՅՑԵԼԵՑԻՆ «ԱԶԳԱԿ»**



Հայաստանի ամերիկեան համալսարանի նախագահ Արմեն Տեր Կիրեղեան եւ փոխնախագահ Աշոտ Ղազարեան երեկ կեսօրէ ետք այցելեցին «Ազդակ», տեսակցեցան տնօրէնութեան ու խմբագրական կազմին հետ եւ ծանօթացան թերթի տարբեր բնոյթի աշխատանքներուն:

Այցելելով նաեւ թուայնացման բաժանմունք՝ Տեր Կիրեղեան գնահատեց թերթի արխիւներու թուայնացման աշխատանքը եւ շեշտեց համալսարանի ելեկտրոնային գրադարանին հետ համագործակցութեան անհրաժեշտութիւնը:

Հայաստանի ամերիկեան համալսարանի պատասխանատուները Լիբանանի մէջ հանդիպումներ պիտի ունենան հոգեւոր, միութենական եւ կրթական պատասխանատուներու, ինչպէս նաեւ հայկական վարժարաններու բարձրագոյն կարգերու աշակերտութեան հետ:

Համալսարանի նախագահը հարցազրոյց ունեցաւ «Ազդակ»-ին հետ: